Արձանագրություն 2
ՀՀ Արագածոտն մարզի Ալագյազի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԾՁԲ-01/26» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ձևով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 16.02.2026թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ա.Խուդոյան - ՀՀ Արագածոտն մարզի Ալագյազի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Հանձնաժողովի անդամներ

Շուխիկ Պապիկյան - ՀՀ Արագածոտն մարզի Ալագյազի համայնքապետարանի գլխավոր հաշվապահ ժ/պ
Արմինե Սարգսյան- ՀՀ Արագածոտն մարզի Ալագյազի համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ
Ջալիլ Խուդոյան- ՀՀ Արագածոտն մարզի Ալագյազի համայնքապետարանի ավագանու անդամ
Անժելա Սարգսյան- ՀՀ Արագածոտն մարզի Ալագյազի համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ

Ընթացակարգի քարտուղար՝ Ն. Տիգրանյան

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները և տվյալները.

1. ՀՀ Արագածոտն մարզի Ալագյազի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԾՁԲ-01/26» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել.
ա/ «ՊՐՈՖ-ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ -ն՝ ՀՎՀՀ 05015431, էլ հասցե՝ cherchyan79@mail.ru, հեռ՝ 094 25 08 79
բ/ «Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ-ն, ՀՎՀՀ 01064204, էլ հասցե՝ artsakhroad@gmail.com , Հեռ.՝ 091-21-92-43

2. Տվյալներ մասնակիցների հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 Մասնակցների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 «Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ՝ մասնավորապես, որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը կնքված է 2022 թվականին, մինչդեռ հրավերով սահմանված պահանջի համաձայն մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու և դրա նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր, ինչպես նաև հավելված 1-ում՝ դիմում հայտարարությունում, ընթացակարգի ծածկագիրը չի համապատասխանում հրավերի ծածկագրին և իրական շահառուների մասին տեղեկատվություն պահանջող կայք էջի հղումը ամբողջական չէ:

3.2 «ՊՐՈՖ-ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագրով ծառայությունների մատուցման ժամկետը սահմանված է եղել 2023թ. ընթացքում. սակայն ըստ նուն պայմանագրին կից ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությամբ փաստվել է, որ ծառայությունը մատուցվել է 2024թ. հունվարի 30-ին, ինչը ըստ հրավերի 2.2.1 կետի չի կարող համարվել որպես նախկինում պատշաճ ձևով իրականացված պայմանգիր, ինչպես նաևհայտով ներկայացված մասնագետի համաձայնությունը հաստատված/կամ ստորագրված/ չէ տվյալ մասնագետի կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցների առաջարկած գինը.

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցների անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1 Ալագյազ համայնքի Ալագյազ, Ճարճակիս, Ավշեն, Կանիաշիր, Ռյա-Թազա և Սադունց վարչական բնակավայրերի ներբնակավայրային փողոցների ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	
	Գնման գինը՝ 3 000 000 ՀՀ դրամ	
«ՊՐՈՖ-ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ	925 000	1 110 000
«Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ	1 580 000	1 896 000

5. Հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել:

6. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ հանձնաժողովը որոշեց.

ա/ «Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ-ին և «ՊՐՈՖ-ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ-ին տալ մեկ աշխատանքայի օր ժամկետ՝ շտկելու սույն արձանագրության 3-րդ կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

բ/ Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2026թ. մարտի 5-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա.Խուդոյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Շ. Պապիկյան

_____ Ա.Սարգսյան

_____ Ջ.Խուդոյան

_____ Ա. Սարգսյան

Գնումները համակարգող _____ Ն. Տիգրանյան